

ԱՃԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՏՈՐՈՒՂԻՔ



Ծանօթ են մեզ շատ հին ժամանակէ ի վեր մնացած ստորերկրեայ անցքեր, և անպակաս են յայտ մտօնելու Հնադարեան քաղաքեան և նարտարութեան հոյակապ յիշատակարաններ. ըստ իր կը վիպայն Եգիպտոս, և քիչ յետոյ Հռովմա՝ իւր գեանգաճարաններով և ջրմուկներով: Սակայն յետոյ այսպէս ևս չկատարուեցան նմանօրինակ մեծամեծ գործեր, մինչև որ շոգեկառն ստիպեց ծակել կտրել լեռներ որոնց վրայ ելնել անկարելի էր իրեն:

Այսօր կը համուրին Հագարէ աւելի ստորուղիք (tunnel) երկաթուղեաց վրայ. բայց անոնք որ շինուած են յառաջ քան 25 տարի, կատարուած են ձեռաց ծակիչներով, այս պատճառաւ ահա՛ հին ստորուղիք շատ կարճ են. սակայն և այնպէս 1847ին երեք Հատ նոյն տեսակէն աւարտեցան, երկուքն յԱնգղիա և մին ի Գաղղիա, իւրաքանչիւրն երեք մղոն երկայնութեամբ, և իրաւամբ համարուեցան հսկայական գործեր:

Միացեալ նահանգաց մէջ սկզբանէ ի վեր ստորուղիք աւելի բազմաթիւ են քան յԵւրոպայ, բայց և ընդհանրապէս աւելի կարն: Ամենէն աւելի երկայնը, այսինքն Ս. Փերնանդին (S. Fernando) որ Հարգիւ 2,090 մետր երկայնութիւն ունի, կատարուած 1876ին, և արժեց գրեթէ 4,700 փրանկ առ մի մետր:

Այժմ աշխարհի ամենէն աւելի մեծ ստորուղիք չորս են. ժամանակի կարգաւ՝ առաջինն է Հոոսակ (Hoosac), որոյ շինութիւնը տևեց 22 տարի և, 1876ին աւարտեցաւ, երկայն 7,600 մետր, որուն ծախքը Հասաւ 50 միլիոն փրանկի: Մինչև 1886 այս ստորուղեայ համար գործածուեցաւ ձեռաց ծակիչ, և այնուհետև սկսան գործը յառաջ տանելի տալարած ծակիչով, միանգամայն ի գործ դնելով ստորուղեայ շինութեան համար գիտական ամենահաճանարեզ գիւտերն:

Երկրորդը Կենիս (Cenis) լեռինն է, երկայն աւելի քան 12 Հագարամետր, և արժեց 75 միլիոն Երրորդը Ս. Գոթարդ (S. Gothard), երկայն գրեթէ 14,800 մետր, արժեց 56 միլիոն չափ: Չորրորդը Արլբերգին (Arlberg), 12 Հագարամետրէ քիչ մ'աւելի երկայն, արժեց գրեթէ 37 միլիոն Կենիս լեռին ստորուղեայ շինութիւնը տևեց 14 տարի, Ս. Գոթարդին 9 տարի, և Հինգ ասորի Արլբերգին: Առաջինն և վերջինն մէջ շատ մեծ տարբութիւն կայ, նկատմամբ ժամանակի և գործածուած դրամի. ասիկայ յայտնի ապացոյց մ'է գիտութեան արդի հսկայաբայլ յառաջադիմութեան:

Յերոպայ ստորուղեաց շինութիւնը երբեմն հանդիպեր է այնպիսի դժուարութեանց որք ամենևին անձանօթ են Միացեալ նահանգաց այսինքն՝ սահմանագլխի լեռները ծակելու դժուարութիւնը, դժուարութիւն յիրաւի ամենամեծ, արգաց մէջ քաղաքագիտական երկպառակութեան և նախանձանդորութեան պատճառաւ:

Աշխարհի ամենամեծ ստորուղին (աշխարհացոյցի վրայ) Գաղղիոյ և Անգղիոյ մէջ զբառնուած ջրանցքն է: Բայց շատ ժամանակ պէտք է՝ մինչև որ դադրին նախապաշարմունք որք կ'արգելուն զգաղղիացիս և զանգղիացիս ձեռքերնին ծովուն տակ երկնցը տեսու:

Գարձեալ, այլ ևս նորօրինակ բան մը չէ ստորուղիներ փորել նաև ծովերու յատակը, թէպէտև այս յետինքս կամ այնքան լայն լինին՝ որ ամենամեծ ծախք պահանջեն կամըր, ջառագութեան համար, կամ շատ յաճախեալ նաւերէ, և կամ այլ և այլ դժուարութեանց ենթակայ. մանաւանդ թէ առաջին և նշանաւոր ջրայտակ ստորուղի մը բաւական հին թուական կը կրէ, որովհետև այս նախաքաղաքարը կը հասնի 1798ի. կ'ուզեմ ըսել այն փորելի անցքը՝ որ չի նուեցաւ ի Լոնդոն Տոմիս գետին տակ, զոր սկսելով, կիսկատար թողով, դարձեալ կրկին և կրկին սկսելով, վերջապէս լնացաւ 1843ին: Բայց աւելի նշանաւոր և ջրայտակ ստորուղիներն են, յախ Ս. Կլեր գետին տակ՝ որ կը միացնէ զՄիացեալ նահագս կտու նաղայի հետ՝ գրեթէ 2 Հագարամետր երկայնութեամբ. երկրորդը Սիւեան գետին տակ, ստուգիւ հսկայագործ ստորուղի՝ 9 Հագարամետր երկայնութեամբ, որուն շինութիւնն աւարտեցաւ արուեստական մեծամեծ դժուարին պարագայից մէջ: Հուսկ երրորդը Մերսէի գետին

տին տակ, երկայն աւելի քան 7 հազարա-
մետր, որ անընդհատ ծախք կը պահանջէ,
օգտփոխ և ջրհան գործեաց համար՝ որոնց-
մով անցքը միշտ կը մնայ չոր և լի շնչելի
օդով: Կարծես իրաւացի է հոս հարցնել,
թէ այսպիսի ժամանակի և դրամի մեծամեծ
կորուստը զոր հարկ եղած է ընել՝ ՚ի շինու-
թիւն այս երկու յետին ստորուղեաց, կրնայ
արդեօք համեմատական համարուիլ՝ փոխա-
դրող կառքը (véhicule) յփոխելով՝ քիչ մը
ժամանակ շահելու և թեթև նեղութիւն մը
չքայելու առաւելութեան հետ:

Արժանի են գնահատութեան նաև ստու-
րերկրեայ անցքերը, որոնք չուր կը մատա-
կարարեն մեծամեծ քաղաքաց: Այս ջրմուղ-
ներէն նշանաւորագոյններն են նախ Դելու-
Յօրկինը՝ որ կը բերէ Չուրը 48 հազարա-

մետր հեռաւորութենէ, որուն ծախքն հասաւ
100 միլիոն փրանկաց: և երկրորդ Քիկա-
գոյինը, որ թէպէտ հազիւ 7 հազարամետր
երկայնութիւն ունի, սակայն զրեթէ բոլորու-
մին լսին ջրոց տակ շինուած է:

Շատ վտանգաց ենթակայ են ստորերկրեայ
շինութիւնքը, ուստի անընդհատ հսկողու-
թիւն և զգուշութիւն կը պահանջեն, նոյն
իսկ գործը լմնայէն վերջ: Գիտութիւնը
յաղթանակեր է ամենայն արգելից. և սակից
վերջ՝ որչափ որ մեծ ըլլայ ստորուղեայ մը
երկայնութիւնը, սակայն ամենիւն դժուա-
րութիւն մը չի պատահիր: Մէկ խնդիր միայն
կը մնայ լուծելու. այսինքն թէ սոյն ձեռնար-
կին գործածուած դրամագլուխը կրնայ յա-
ռով բերել իւր համեմատական շահը:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք

Ծ Ա Ր Գ Ի Ո Ս Տ Ա Յ Ն Ո Վ Հ Ի Ի Ս Ո Ւ Ա Մ Ք

Սարդի թելով հիւսուածներ գործելու ա-
րուեստն ԺԸ դարէն սկսած է: 1709ին Պ.
Բոն (Bon) Մոնպելիէի (Montpellier)
հայտի աստեղին առաջադն, կը
զրկէ Գաղղիոյ գիտութեան ճեմարանին սար-
դի թելով գործած կէս թաթպան մի և
գուրպայներ: Նա շատ սարդի խոզակներ
(coques d'araignées) ժողվելէն վերջը,
ճախ անոնց փռչին կը մարդէ, կը լուայ զա-
նոնք գաղջ ջրով, վերջը կը լուծէ ջրոյ մէջ
անոս, աղբորակ և քիչ մը արարական խէժ.
յետոյ սարդի խոզակները դնելով այս խառ-
նըրդին մէջ, երեք ժամ կը խաշէ զանոնք:
Յետոյ այս լրէն նաեղելով կը լուայ զանոնք
պաղ ջրով, կը շորցնէ՝ կը զգէ ամենամուրը

զգոցներով և այսու կը ոտանայ ամենա-
գեղեցիկ մոխրագոյն թել մի, որով հիւսեց
հետաքրքրական նիւթեր: Իբ այս գործոց
վրայ հրատարակած մատենիկը ամէն լեզուով
թարգմանուած է:

Գաղղիոյ գիտութեան ճեմարանը կը յան-
ձնէ առ Ռէտովիւր և իւր անդամոց մի քա-
նիներուն, որ այս գիտը լաւ ուսումնասի-
րեն: Ըստ Ռէտովիւրի՝ սարդի թելով ոչ
մի բան կրնար հիւսուիլ, վասն զի այդ
թելն շատ բարակ է: 90 սարդի թել իրա-
քու ոլորելով՝ հազիւ մէկ մետաքսի թելի ուժը
ի՛նչենայ. դարձեալ առ նուազն պէտք է
18, 000 սարդի թել՝ որպէս զի ուժով կա-
րելու թել մի պատրաստենք: Այս հմուտ
միջատարանը ցուցոց որ միայն պարտիզաց
սարդերն թելերն կրնան գործի գալ. և եթէ՛
օրինակի համար լսենք՝ 100 վետաքսի խա-
զակ կու տայ 10 գրամ՝ մետաքս, 12 ան-

4. Մետաքսեայ փղբիկ զնտակներ են, որոնց
մէջ սարդերն իրենց ձուերը կը ծածկեն կը
պահեն: